# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ


«07» 10 2021 թ.

№ 24/1-5/241308


ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
Հեռ.՝ (+374 11) 518 304
Էլ. փոստ՝ erebouni@yerevan.am


«ՌՈՒԲ-ՌՈԲ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆԻՆ
Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ,
Գ.Նժդեհի փող. Հ. 103/26

## Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՌՈՒԲ-ՌՈԲ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 04.06.2021 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՊՁԲ-21/132-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Երևանի քաղաքապետարանի և «ՌՈՒԲ-ՌՈԲ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 04.06.2021 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՊՁԲ-21/132-1» ծածկագրով գնման հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն կատարողը պարտավոր էր մատակարարեր արհեստական խոտածածկ և ռետինե հատակ:

Արհեստական խոտածածկը պետք է բավարարի շրջակա միջավայրի կյանքի և առողջության անվտանգության սահմանված պահանջներին, որի համար պետք է ներկայացնել համապատասխան հավաստագիր /սերտիֆիկատ/: Արհեստական խոտածածկը պետք է լինի 2x10 մ չափերով, 14700 հատ/քմ խտության, խավի բարձրությունը 20 մմ, ընդհանուր հաստությունը 35 մմ:

Ռետինե հատակը պետք է բավարարի շրջակա միջավայրի կյանքի և առողջության անվտանգության սահմանված պահանջներին, որի համար պետք է ներկայացնել համապատասխան հավաստագիր /սերտիֆիկատ/: Ռետինե սալիկները պետք է լինեն 40մմ հաստության, 1,05x1,05 չափերի, բարձր խտության ռետինե հատիկներից: Աշխատանքային ջերմաստիճանը -40 +80C, մակերևույթը հարթ, տաշված կոշտությունը 40-80 ն/մ, գույնը սև, կարմիր, կանաչ և կապույտ:

Վերոնշյալ արհեստական խոտածածկերը և ռետինե հատակները պետք է մատակարարվեր մինչև 31.08.2021 թվականը ներառյալ:

Համաձայն վերը նշված պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի բ) ենթակետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՌՈՒԲ-ՌՈԲ» ՍՊ ընկերությունն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 12.08.2021թ. 24/2-8/18959ել գրության պահանջը, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում «ՌՈՒԲ-ՌՈԲ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1/ կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն <<Ամերիաբանկ>> ՓԲ ընկերություն տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից /որակավորման ապահովում 1.184.400 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում 789.600 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությունը <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ԲԱԼԱՅԱՆ

Կատ.՝ Մ. Մելքոնյան
011 518342